ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ

Գեր. Տ. Գարեգին եպիսկ. Գազանճյանը, ավազանի անունով Պետրոս, ծնվել է Կ. Պոլսում՝ 1927 թվականի մայիսի 18-ին։ Հայրը՝ Վաղարշակ, մայրը՝ Շողակաթ, եղել են բնիկ երգնկացիներ։ 1933 թվականին կանխահաս մահով կորցնում է հորը և տոյրում է որբի զառնությունը։

1940 թվականին ընդունվում է Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանը։ 1945 թվականին ավարտում է Ժառանգավորաց վարժարանը և հոկտեմբերին սարկավագ է ձեռնադրվում Տ. Կյուրեղ պատրիարքից և դառնում Ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ։ 1948 թվականին ավարտում է ընծայարանը փայլուն հաջողությամբ։

1950 թվականի հունվարին կուսակրոն քահանա է ձեռնադրվում։

Այնուհետև վանքում խոստումնալից ե երիտասարդ հոգևորականի առաջ բացվում է վանական, կրթական գործունեության ասպարեզը։

1946—1949 թվականներին վարում է Ժառանգավորաց վարժարանի փոխտեսչի պատասխանատու պաշտոնը, 1950—1951 թվականներին դիվանապետի պաշտոնը։ Նույն տարվա մեջ վերադառնում է իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս, Գարեգին պատրիարք Խաչատրյանի հրավերով՝ ստանձնելու նորաբաց Ս. Խաչ դպրեվանքի տեսչական պաշտոնը մինչև 1953 թվականը։ 1954 թվականին Գարեգին պատրիարքից ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան։

1952 թվականին Կ. Պոլսի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Շողակաթ» ամսագրի խմբագիր է նշանակվում միաժամանակ դասավանդելով Կենտրոնական բարձրագույն և Պեղճյան միջնակարգ դպրոցներում։

1953—1959 թվականներին եղել է Կ. Պոլսի պատրիարքության կրոնական ժողովի ատենապետ։

1959 թվականին հովվական պաշտոնով մեկնել է Ամերիկա և ստանձնել Վաշինգտոնի հայ եկեղեցու հովվությունը։ Նույն պաշտոնի վրա մնացել է մինչև 1966 թվականի սեպտեմբերը, ծավալելով եկեղեցական, մշակութային, կրթական, վարչական բեղուն գործունեություն։ Նույն տարիներին աշխատակցել է «Հայաստանյայց եկեղեցի» առաջնորդարանի պաշտոնաթերթին և «Նոր աշխարհ» շաբաթաթերթին։

1963 թվականին ընտրվել է Ամերիկայի հայոց թեմական խորհրդի անդամ։

1966 թվականի սեպտեմբերին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ նշանակվել է Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական Պատվիրակի փոխանորդ, և այդ հանգամանքով հոկտեմբերի 23-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Մ. Տաճարում՝ Ն. Ս. Օծության ձեռքով։

Նորապսակ Տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյանը հայ եկեղեցու պատրաստված, հավատավոր և նվիրյալ հոգևորականներից է։ Միշտ ծառայասեր, պատրաստակամ, անվարան գնացել է այնտեղ, ուր իր կոչումը նրան առաջնորդել է։

Տ. Գարեգին Եպիսկոպոսը գտնվում է իր ուժերի հասության շրջանում։ Ամենայն Հայոց Հայրապետը նրան կոչել է լուրջ ու պատասխանատու աշխատանքի։ Վստահ ենք, որ Տ. Գարեգին սրբազանը իր նոր պաշտոնավարության մեջ, կարդարացնի Հայրապետական բարձր վստահությունը, բարի արդյունավետությամբ, ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։